

մէջ անպակաս էին անձինք՝ որոնք «ան-  
խտիր տան զանձինս որկորստութեան եւ  
արբեցութեան» (Ընդհ. 20): Սարգիս վրդ-  
ասոնց բազմութիւնը եւ զինւոյն հետ ա-  
ւանդական մտերմութիւնը ցոյց կու տայ  
հեզնութեամբ մը. «Բազումք ի մէնջ ի-  
բրեւ զհայրենի ժառանգութիւն պահեն  
զարբեցութիւն» (792), ինչ որ աշխար-  
հականաց զինեմուլութեան ժառանգակա-  
նութիւնը կը յիշեցնէ (աստ, 223):

Անգամ մը զեղխութիւնն զմենաստանն  
աշխարհի մերձեցնելէն վերջ՝ շատ դիւրին  
էր որ վանականը ելնէին նոյն հաճոյք-  
ներն աշխարհի մէջ իսկ որոնել: Ման-  
դակունւոյն ընծայուած ճգնաւորաց խրա-  
տին մէջ կը յանդիմանուին վանաց երի-  
ցունք, որոնք «երիվարաւ սատանայի՛»  
այս ինքն սատանայի վրայ նստած՝ «զհետ  
տերանց եւ տիկնաց յածեալ ծփին» (219):  
Եւ Լամբրոնացին մատնացոյց կ'ընէ ա-  
նոցմէ ժամանակակից նշանաւոր դէմք մը,  
Տուտէորդին, որ «ուտելով եւ ըմպելով  
ընդ աշխարհականաց՝ զպորտն պարարէ»  
(Թղթ. 223): Սա մրցակից ունէր ուրիշ-  
ներ ալ, որոնք աշխարհականաց հետ կը  
բնակէին քաղաքաց ու գիւղերու մէջ. եւ  
«յորովայնամուլութիւնս անպատկառս եւ  
յարբեցութիւնս անառակս եւ յամենայն ան-